ԵրիտասարդՊատմագետներիԱսոցիացիա ՀԿ-ի **Edu Armenia** նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր

վերապատրաստման

դասընթաց **2022**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպես ինտեգրել նոր աշակերտին դասարանում

Հետազոտող ուսուցիչ՝ Անյուտա Մովսիսյան

Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան
թիվ 11 հիմնական դպրոցի պատմության ուսուցիչ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….3

Խնդրի ներկայացում ……4

Տեսության ուսումնասիրում.....6

Տվյալների հավաքագրում.....9

Լուծումներ.....15

Հոգեբանի աջակցություն.....16

Եզրակացություն.....19.

Գրականության ցանկ.....20

Ներածություն

Գլոբալացման արդի ժամանակաշրջանում գնալով մեծ բնույթ է կրում մարդկանց միգրացիան: Միգրացիան բնակչության բռնի կամ կամավոր տեղաշարժն է, որի պատճառները լինում են մի քանի տեսակ՝ տնտեսական, քաղաքական, կրոնական, ընտանեկան-կենցաղային և բնական: Անկախ պատճառներից, մարդկանց կողմից բնակավայրի փոփուխությունը ծնում է բազմաթիվ նոր խնդիրներ՝ տնտեսական, սոցիալական, մշակութային, ազգային հոգեբանական և այլն: Այս երևույթը, հատկապես, ծանր են տանում երեխաները: Նրանք կանգնում են լուրջ խնդիրների առաջև՝ փոխելով իրենց շրջապատը, դպրոցը, ընկերներին: Հատկապես խոցելի են դեռահասները: Հոգեբանները դեռահասության տարիքը համարում են ամենաճգնաժամայինը: Այս տարիքում սկսվում է սեռական հասունացման շրջանը: Փոխվում է նրա արտաքին տեսքը, որը կարող է հաճախ դեռահասի համար տհաճ լինել և դառնալ շրջապատից, նոր ընկերներից մեկուսացման պատճառ: Կենսաբանական փոփոխությունները ևս հանգեցնում են հոգեբանական փոփոխությունների: Դեռահասը կարող է դառնալ անկառավարելի, ըմբոստ, չհահդուրժող: Նոր կոլեկտիվին նա դժվար է հարմարվում:

Խնդրի ներկայացում

Արցախյան վերջին 44-օրյա պատերազմից հետո Արցախի Հադրութի շրջանի Տող գյուղից մեր դասարան եկավ Լիլիթը: Նա վեց տարի սովորել էր իրենց գյուղի դպրոցում: Պատերազնի պատճառով նրանց ընտանիքը տեղափոխվել էր Գորիս, այնտեղից էլ՝ Հրազդան: Անցել էր բավական ժամանակ, սակայն Լիլիթը չէր ինտեգրվում դասարանին: Ինքնամեկուսանում էր, գրեթե չէր շփվում համադասարանցիների հետ, դասերին ներկայանում էր անպատրաստ: Նրան դասարանում ներառելու համար բոլորը պատրաստակամ էին՝ դասավանդող ուսուցիչները, դասընկերները, դասղեկը:

Անցել էր մեկ ամիս, բայց Լիլիթը չէր փոխում իր տրամադրություն: Դասարանում ստեղծվել էր բարոյա-հոգեբանական ծանր մթնոլորտ: Աշակերտները չգիտեին ինչպես վարվել: Լիլիթը, չնայած ուսուցչների ջանքերին, դասերինին ներկայանում էր անպատրաստ: Ոչ մեկի հետ ընկերություն չէր անում: Երբ դասարանցիներից ինչ- որ մեկը փորձում էր խորհուրդ տալ նրան՝ չէր ընդունում; Սովորողի դժվար ինտեգրումը ազդում էր դասարանի բարոյահոգեբանական մթնոլորտի և նրա ուսումնառության վրա: Ես հասկացա, որ այս խնդիրը պետք է ուսումնասիրել խորությամբ և գտնել այն լուծելու տարբերակներ

Հարց՝

- Իչպե՞ս նոր աշակերտին ինտեգրել դասարանում
- Ի՞նչ անել, որ երեխաները արագ ընդունեն նոր աշակերտին
- Ո՞րն է աշակերտին ինտեգրելու ամենանարդյունավետ միջոցը
- Ի՞նչ անել, որ նա իրեն դասարանում ընդունված ու հարված զգա

Վարկածի առաջ քաշում

- Այցելե նրանց տուն և ավելի մանրամասն տեղեկություններ հավաքել

- Խորհրդակցել դպրոսի հոգեբանի,սոցմանկավարժի,աշակերտների ու դասավանդող ուսուցիչների հետ և կատարել տարաբնույթ աշխատանքներ՝ խնդրի լածումը գտնելու համար

Տվյալների հավաքագրման պլան

Զրուց ծնողների հետ

- Կարգապահական առումով՝ ինչպե՞ս է իրեն պահել իրենց գյուղի դպրոցում
- Ի՞նչ առաջադիմություն է ուեցել:
- Արտադպրոցական ի՞նչ նախասիրություններն ունի:
- Որտե՞ղ է եղել ռազմական գործողությունների ժամանակ:
- Լիլիթը ունեցե՞լ է կամ ունի առողջական խնդիրներ:
- Ի՞նչ նախասիրություններ ունի դպրոցից դուրս:

Զրուց դասարանի աշակերտների հետ:

Զրույց դասվանդող ուսուցիչների հետ:

Զրույց դպրոցի հոգեբանի հետ, որպեսզի պարզվի

- ինչպիսի՞ վախեր ունի Լիլիթը:
- Ի՞նչը կարող է նրան հասցնել սթրեսի:
- ինչպե՞ս են ընդունել դասարանում նրան:

ԳԼՈՒԽ 1

Տեսության ուսումնասիրում

Արդի շրջանում տնտեսական, քաղաքական, ազգային և այլ պատճառներով պայմանավորված, մարդիկ հաճախ են փոխում իրենց բնակավայրը: Նրանց երեխաները փոխում են դպրոցները և հաճախ հանդիպում են տվյալ դասարանում ինտեգրվելու խնդրին: Արցախյան պատերազմներից հետո մեծ քանակությամբ երեխաներ Արցախից տեղափոխվեցին Հայաստան: Պատերազմի արհավիրքի միջով անցած երեխաները տարել էին տարաբնույթ վախեր, որոնք նրանց դարձրել էին ինքնամփոփ ու մեկուսացած: Այս առումով ամենախոցելին դեռահասներն են:

Դեռահասությունը հոգեբանները բնութագրուն են որպես ճգնաժամային տարիք: Նրանց մոտ տեղի են ունենում կենսաբանական և հոգեբանակակ փոփոխություններ: Դեռահասի մոտ զարգանում է ծայրահեղականությունը: Նա կարող է արագ փոխել իր կարծիքը շրջապատի մարդկանց, կոլիկտիվի, որտեղ գտնվում է ինքը, տարբեր երևույթների նկատմամբ: Այս տարիքում զարգանում է մտերմիկ շփումներ, լավ հարաբերություններ հաստատելու պահանջմունք, որի միջոցով նա կճանաչի աշխարհը: Նա ունի աշխարհում իր տեղն ու դերը հասկանալու խնդիր: Ըստ հոգեբան Բոժովիչի, դեառահասը ապագային նայում է ներկայի աչքերով , իսկ պատանին կյանքին նայում է ապագայի աչքերով: Դեռահասն ունի իքնուրույն գործելու, ինքնահաստատման կարիք: Նրա գործողություններն ինքնաբուխ ու անկանխատեսելի են, Իսկ երբ այս խնդիրներին գումարվում է պատերազմը....

Պատերազմը խառնում է դեռահասի ներքնաշխարհը; Քանդվել է նրանց տունը, կորցրել է հարազատներ, ստեղծվել է անկանխատեսելի, անկայուն վիճակ: Կարծես նրա կյանքի իմաստը փոխվում է: Ծատերը կորցնում են իրենց հետաքրքրությունը շրջապատի, ուսման նկատմամբ: Կատարվում է որոշ արժեքների վերաարժևորում: Նա դառնում է խեստ դյուրագրգիռ: Այս պայմաններում խիստ կարևոր դեր ունեն մեծահասակները, ուսուցիչները: Դեռահասի ներկայությամբ չի կարելի արտահայտել տագնապային, հոռետեսական մտքեր: Օրինակ՝ «Դիրքերում կան շատ դավաճաններ», «Այս աշխարհում ազնվությունն ու հայրենասիրությունը վերացել է », « Բոլոր

տարածքները գրավել են թուրքերը » և այլն: Սրանք ավելի են խորացնում նրա հիսթափությունը մարդկանց ու աշխարհի նկատմամբ: Դեռահասը այլևս չի վստահում մարդկանց, հաճախ էլ ինքն է փորձում վրեժխնդիր լինել: Պատերազմը նրա կյանքը բաժանում է երկու մասի՝ մինչ պատերազմը և դրանից հետո:Այս տրավման հաղթահարելու համար շատ կարևոր է սոցիալական այն միջավայրը որում նա հայտնվում է: Պետք է այնպես աշխատենք, որ կարողանանք նրան ինտեգրել նոր շրջապատում: Ինտեգրումը երեխայի ընդգրկումն է տարբեր սոցիալական խմբերում՝ նրա սոցիալականացումը ապահովելու համար; Դասարան եկած նոր աշակերտը պետք է ներառվի տվյալ դասարանում,դառնա նրա լիարժեք անդամը՝պահպանելով իր անձնական առանձնահատկությունները; Սակայն կան բազմաթիվ գործոններ, որոնք խանգարում են նրանց ինտեգրմանը :

1. Մշակութային -երբ դեռահասը պատկանում է նույն էթնիկ խմբին, սակայն խուսում է բարբառով և այլ շեշտադրմամբ: Պատմա-մշակութային արժեքների նկատմամբ ունի այլ մոտեցում

2.Միջավայրային- երբ նա ապրում էր ուրշ հանրապետությունում, որտեղ գործում էին սովորութային և բարոյահոգեբանական այլ արժեքներ: Մինչև տեղափոխվելը ապրել է հեռավոր մի լեռնային գյուղում, իսկ հիմա հաստատվել է քաղաքում կամ հակառակը;

3. Սոցիալական- փոխվում է շրջապատը, կոլեկտիվը: Փոխվում են ընկերները: Նա նախորդ միջավայրում ուներ ընկերներ, կոլեկտիվ, որտեղ ինքն ընդուված էր, ինքնադրսևորվել էր, գիտեին իր ընդունակություններն ու առանձնահատկությունները: Ուներ ապագայի հետ կապված պլաններ: Այս բոլորը խառնվել է բնակության վայրի փոփոխության պատճառով; նա պետք է ամեն ինչ սկսի զորից և գնա առաջ: Պետք է հարմարվի նոր միջավայրին, դպրոցին: Ձեռք բերի ընկերներ, ցույց տա իր ընդունակություններն ու կարողությունները: Դրսևորի իր առանձնահատկությունները, ձևավորի իր ԵՍ-ը: Սա շատ բարդ հոգեբանական գործընթաց է:

Շատ կարևոր է, որ չպիտակավորեն նորեկին և փաստորեն դրանով առանձնացնեն նրան կոլեկտիվից: Օրինակ՝ չի կարելի ասել նորեկ կամ

բնութագրել նրան հին բնակավայրի անունով: Սա կարող է երեխայի մոտ առաջացնել թերարժեքություն՝ որ նա տարբեր է մյուսներից և նրանց հավասար չէ:

Հատկապես պատերազմական շրջաններից եկած երեխաների հետ պետք է առավել զգույշ լինել: Հաշվի առնել, որ նա հոգեկան տրավմայի է ենթարկվել: Այրվել է հայրենի տունը: Զոհվել են հարազատ ու անփոխարինելի մարդիք: Կորցրել է մտերիմ ընկերոջը, սրիած էակին: Այս բոլորը կարող են առաջացնել վարքային և հուզական փոփոխություններ: Նա կորող է ունենալ տրամադրության արագ տատանումներ, վախեր, տագնապներ, ակադեմիական դժվարություններ ուսման բնագավառում,որը կապված չէ նրա իտելեկտուալ կարողություններից: Իր կամքից անկախ,որոշ հանգամանքների պատճառով, նա չի հաճախում դպրոց և ունենում է ծրագրային բացթողումներ ,որոնք ամբողջությամբ, առանց լրացուցիչ պարապմունքների ,չի կարողանում հաղթահարել; Ուսուցիչը կարող է նրան օգնել այդ վիճակից դուրս գալու համար:Նա պետք է ցույց տա, որ ինքն և ամբողջ դասարանը նրա կողքին են, որ կարող են հասկանալ ու օգնել նրան հնարավոր բոլոր միջոցներով:

Կարևոր խնդիր ունեն կատարելու նրա ընտանիքը և ծնողները: Ընտանեկան մթնոլորտը, ծնողների հետ փոխադարձ կապը, նրանց վերաբերմունքը դեռահասի խնդիրների նկատմամբ, կարող են որոշիչ դեր կատարել; Ընտանիքն է ապահովում այնպիսի կարևոր բաներ, ինչպիսիք են կասարանը, սնունդը, սերը, հոգատարությունն ու ջերմությունը: Վ. Սուխոմլինսկու կարծիքով ընտանեկան կյանքում պետք է հաշվի առնել միմյանց մտքերը, համոզմունքները, զգացմունքները, սիրելի մարդկանց ձգտումները: Պահպանելով սեփական արժանապատվությունը՝ պետք է կարողանալ զիջել միմյանց: Ընտանեկան դաստիարակությունը կարող է իրականացվել ավանդական և ազատական սկզբունքներով: Ավանդականի դեպքում՝երեխաներից ակնկալվում է հնազանդվել ծնողներին, ցուցաբերել հարգանք մեծերի նկատմամբ: Նրանք չեն գտնում, որ պետք է բացտրեն իրենց արարքների պատճառները: Խիստ վերահսկում են դեռահասի բոլոր քայլերը: Նման դեպքերում երեխաները փակվում են,ծնողների հետ նրանց հարաբերությունները խախտվում են; Երեխաները չեն կիսվում ծնողների հետ՝ վախենալով, որ կարող թ իրեն չվստանեն: Երեխան սուտ է ասում՝ վախենալով քննադատությունից:

Ազատական ընտանիքներում՝ երեխաներին վերաբերվում են առավելապես հավասարը հավասարի սկզբունքով: Նրանց թույլատրված է նաև հակադրվել ծնողների կարծիքներին և գործողություններին՝ մաժամանակ պահանջելով պարտականությունների կատարում: Ծնողական հսկողությունը այնքան էլ չի կաշկանդում նրանց:Նրանք հաճախ են ծնողներից լսում բացատրություններ: Լինում են դեպքեր, երբ ծնողները զբաղված լինելով ավելի արագ ու կոնկրետ առաջնահերթություն ունեցող հարցերի լուծմամբ,երկրորդական պլան են մղում տվյալ պահին դեռահասին հուզող խնդիրները, ուսման բնագավառում նրա մոտեցումները; Նման դեպքերում երեխան ավելի է խճճվում; Կորում է նրա հետաքրքրությունը ուսման և շրջապատի նկատմամբ; Նա դառնում է ինքնամփոփ ու մեկուսանում է շրջապատից; Այս վիճակում դեռահասն դժվարանում է ներառվել նոր կոլեկտիվում և դառնում է նրանից կտրված; Նման դեպքում նա մեծ օգնության կարիք է ունենում;

Ինտեգրման գործընթացը պետք է կատարել քայլ առ քայլ հաղթահարելով առաջացած դժվարությունները; Այն հաջողությամբ ավարտելու համար պետք է համախմբել ծնողներին, դասղեկին, համադասարանցիներին, հոգեբանին սոցմանկավարժին, տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչներին և բոլոր շահագրգռ անձանց :

ԳԼՈՒԽ 2

Տվյալների հավաքագրում

Հանդիպում ծնողների հետ

Հանդիպեցի Լիլիթի ծնողներին: Անկեղծ ու արդյունավետ զրուցեցինք: Պարզվեց,

որ Լիլիթը ծնողների երրորդ երեխան է: Նրա ու երկրորդ երեխայի մեջ կա ութ տարվա տարբերություն: Մայրն ասում է, որ Լիլիթը չորս տարեկանում ծանր հիվանդանում է: Երբ երեխան հուզվում էր, կամ իր ցանկությունը չէին կատարում, ջղաձգվում և ընկնում էր ցնցումների մեջ ու որպեսզի հիվանդության նոպաները չկրկնվեն, կատարել են նրա բոլոր քմահճույքները; Երեխան մեծացել է կամակոր ու քմահաճ: Նրան ամեն ինչ կարելի էր, որը չէր կարելի մյուս երկու երեխաներին; Նա աջ ու ձախ մտնում էր բոլորի խոսակցության մեր, միջամտում նրանց արտահայտելով իր <<հեղինակավոր>> կարծքը : Ծնողները սկզբում ուրախանում էին դրանից, կարծելով թե դա կապված է նրա բարձր ընդունակությունների հետ: Երբ Լիլիթը դարձավ 10-11 տարեկան, հասկացան , որ սխալ են վարվել; Ուզում էին աստիճանաբար նրան վերադաստիարակել, սակայն սկսվեց պատերազմը և ամեն ինչ խառնվեց իրար: Մեծ եղբայրը բանակում էր, թուրքերն առաջ էին գալիս և Լիլիթով զբաղվելու ժամանակ չկար: Ծուտով լուր են ստանում, որ եղբայրը զոհվել է; Աշխարհը փուլ է գալիս նրանց գլխին; Մնացած երկու աղջիկների կյանքը փրկելու համար գալիս են Սևան: Սակայն այստեղ էլ ապահով չէր և նրանք տեղափոխվում են Հրազդան; Սկզբում երեխաները սովորում են ուրիշ դպրոցում, սակայն բնակարանային պայմաններից ելնելով, տեղափոխվում են մեր դպրոց; Մեծ քույրը գնում է Երևան և ուսումը շարունակում քոլեջում, իսկ Լիլիթը մնում է մեր դպրոցում; Եղբոր զոհվելուց հետո, իրենք ավելի են անհանգստանում երեխաների համար. նրանց տվել են լիակատար ազատություն, գլխավոր համարելով նրանց գոյությունը, իսկ մնացածը, ըստ նրանց, կարևոր չի... Լիլիթն իրենց գյուղի դպրոցում լավ է սովորել; Հաճախել է պարի խմբակ: Եղել է շատ ճարպիկ ու ինքնավստահ: Ընկերները միշտ հաշվի են նստել նրա հետ:

Մայրը նշում է, որ եթե Լիլիթը իր առջև որևէ խնդիր էր դնում , աշխատում էր նպատակին հասնել բոլոր միջոցներով; Նա կարող էր բարձր ձայնով լացել, գոռալ, սպառնալ, ստեղծել այնպիսի իրավիճակ, որ դիմացինը ստիպված կատարի իր պահանջ; Դպոցում նա կատարում էր կարգապահական լուրջ խախտումներ՝ աչքի ընկնելու համար;

44-օրյա պատերազմի ժամանակ Լելիթը Արցախի իրենց գյուղում է եղել և իր վրա զգացել է պատերազնի սարսափը;

Վերլուծելով Լիլիթի ծնողներից ստացած տեղեկությունները ինձ համար պարզեցի որոշ հարցերի պատասխան ;

ա/ Լիլիթենց ընտանիքում եղել է տարբերակված մոտեցում երեխաների նկարմամբ; Ընտանիքի երկու ավագ երեխաներին դաստիարակել են ավանդական ընտանիքին բնորոշ կանոններով, իսկ Լիլիթին՝ ազատական, նրան տալով մեծ ազատություն և կատարել են նրա բոլոր քմահաճույքները;

բ/ Լիլիթը եղել է շատ վստահ իր ուժերի նկատմամբ՝գիտակցելուվ որ ոչ մի բան չի խանգարի իրեն նպատակը իրականացնելու համար;

գ/ Նա սովոր է, որ կոլեկտիվում ինքը պետք է ուշադրության կենտրոնում լինի;

դ/ Լիլիթի վարքագիծը պայմանավորված է նրա ընտանեկան դաստիարակությամբ

ե/ նրան ինտեգրելու ընթացքում պետք է աստիճանաբաի ճիշտ ուղու վրա դնել նրա դաստիարակությունը

Զրույց նոր աշակերտի հետ

Ինտեգրումը իրականացնելու հաջորդ քայլը զրույցն է Լիլիթի հետ; Ինձ համար նպատակ դրեցի պարզել մի քանի հարցեր

- Ինչպե՞ս է նա իրեն զգում նոր կոլեկտիվում
- Ինչու՞ է դասերին անպատրաստ ներկայանում;
- Կա՞ դասարանում որևէ մեկը ում հետ ինքը ցանկանում է ընկերություն անել, բայց ինչ-որ բան խանգարում է:
- Արդյո՞ք բաց թողած թեմաները ուսումնասիրելու համար ուսուցիչներից ստացել է բավարար աջակցություն:

Աշակերտի՝ ուսման գործընթացից ետ մնալու պատճառները ուսումնասիրելու համար , անհրաաժեշտ է հաշվի առնել մի քանի չափանիշներ,դրանց ազդեցությունը ուսումնական գործընթացի վրա;

- երեխայի առողջական վիճակը
- Թեմայի դժվարութունը
- ուսման ընթացքում ուսուցչի և աշակերտի համագործակցության առանձնահատկությունը
- աշակերտի կամային հատկանիշների ձևավորումն ու զարգացումը
- երեխայի մտածելակերպի առանձնահատկուրյունը

Երեխայի դասերից ետ մնալու, դասերին չմասնակցելու և կոլեկտիվում չներառվելու պատճառ կարող է լինել բուլիինգը; Ի՞նչ է բուլինգը և ինչպե՞ս կարող է այն դրսևորվել;

Երեխայի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական տեռորը խմբի կամ անհատի կողմից, որը զոհին հասցնում է ֆիզիկական և էմոցիոնալ վնաս, անվանվում է բուլլինգ; Հոգեբանները պնդում են, որ աղջիկների կողմից բուլլինգի արտահայտումը անհամեմատ վտանգավոր է;

Ըստ հոգեբան Վալերի Բեսագի «երբ տղաները որևէ մեկին որպես քավության նոխազ են ընտրում, նրա նկատմամբ ցուցադրում են իրենց ֆիզիկական ուժը, առավելությունները; Իսկ աղջիկները իսկական հոգեբանական պատերազմ են սկսում իրենց զոհի նկատմամբ»; Հոգեբանը պնդում է, որ կանացի բուլլինգը ավելի շատ ծանր է, որովհետև դա ավելի անձնավորված է և հոգեբանորեն ուղղորդված; Այն ավելի էմոցիոնալ է և կործանիչ;

Բուլինգրը ունի դրսևորման մի քանի տեսակ

1.ֆիզիկական (հրել, մազերից քաշել ,ծեծել)

2.վերբալ (ձեռք առնել, ծաղրել)

3.սոցիալական (բոյկոտել,մեկուսացնել)

4 .հիպեր (համցանցի միջոցով)

5.սեռական (անպարկեշտ արտահայտություն, սեռական բռնություն ,հպում)

Ֆիզիկական բուլլինգը ամենատարածվածն է դպրոցում; Կռվարարը դպրոցում մեկ այլ երեխայի վատ վերաբերմունքի համար հարվածում է նրան; Շատ երեխաներ վախենալով վրեժխնդրությունից իրենց ծնողներին ոչինչ չեն ասում;

Վերբալ բուլլինգի ժամանակ բռնարարը օգտագործում է վիրավորանքներ և սպառնալիքներ զոհին վախեցնելու, նրան հոգեկան ու հուզական վնաս հասցնելու համար; Դպրոցում բուլլինգի այս ձևը հատկապես ուղղված է այն երեխաներին, ովքեր չեն համապատասխանում հասարակության կողմից մշակված կանոններին, ինչպիսիք են ավելորդ քաշը, ֆիզիկական խնդիրներ ունենալը;
Սոցիալական բուլլինգի ժամանակ խումբը մեկուսացնում է նրան; Զոհը չի կարողանում հարաբերվել սացիալական տեսանկյունից; Նա ձգտում է միայնության, հաճախակի փոխվում է տրամադրությունը;

Հիպեր բուլինգի ժամանակ բռնարարը էլփոստի կամ սոցիալական կայքերում տեքստային հաղորդագրությունների միջոցով ահաբեկում, շանտաժի է ենթարկում զոհին;

Սեռական բուլլինգը ունենում է անկանխատեսելի հետևանքներ;

Բուլլինգի ենթարկված երեխաները հաճախ իրենց թերագնահատում են; Ժամանակի ընթացքում նրանց հույզերը դառնում են բացասական; Նրանք չեն կարողանում կենտրոնանալ դասի ընթացքում, որի պատճառով ընկնում է նրանց կարողունակությունները, դառնում են մեկուսացած, անտարբեր; Կորցնում են հետաքրքրությունն ուսման նկատմամբ; Հոգեբանների կարծիքով ԼԳԲՏ անձանց զգալի մեծամասնությունը ուսումնական հաստատությունում ենթարկվում է բուլինգի;

Լիլիթի հետ զրույցից պարզեցի, որ նա դասարանում որևէ մեկի կողմից բուլլինգի չի ենթարկվում, սակայն ինքը չի ուզում դաս պատմել , որովհետև

- Դաս պատմելու ժամանակ՝ երբ ինքը գալիս է գրատախտակի մոտ, ամաչում է երբ տղաները նայում են իրեն
- աշխատում է շատ չշփվել երեխաների հետ, որովհետև խոսում է արցախյան բարբառով և վախենում է, որ կծաղրեն իրեն;

Զրույց համադասարանցիների հետ

Հրավիրեցի դասարանական ժողով, որին ներկա չէր Լիլիթը: Ես խնդրեցի, որ նրանք անկեղծ ներկայացեն՝

- Ինչու՞ ընկերություն չեն անում Լիլիթի հետ
- Որևէ՞ մեկը իր օգնությունն առաջարկել է նրան դասերը պատրաստելու հարցում
- Կարո՞ղ են ինձ օգնել Լիլիթին դասարանում ներառելու գործում

Զրույցն ինձ օգնեց : Տղաներից մեկն ասաց ,որ երբ խոսակցության ընթացքուն ինքը նայում է Լիլիթին, նա աշխատում է հայացքը փախցնել: Կարմրում է և հաջորդ օրերին աշխատում է չտեսնել իրեն կամ հետը չխոսել: Ես խորհուրդ տվեցի այս տղային ,որ ժամանակ տա Լիլիթլն, որոշ ժամանակ սպասել՝ գուցե կկարողանա՞նք օգնել նրան այդ հարցում :

Որոշեցինք կազմակերպել էքսկուրսիա, տոնական միջոցառում, գրքի քննարկում և նմանատիպ միջոցառումներ ,որտեղ կդրսևորվեն նրա կարողունակություններն ու նախասիրությունները:

Գլուխ 3

Լուծումներ

Դասղեկի ժամերից մեկը որոշեցի նվիրել հայկական բարբառներին՝ կարևորելով, որ դրանք հարստացնում են մեր լեզուն և շատ կարևոր է բարբառների պահպանումը; Որոշեցինք փոքրիկ մրցույթ անցկացնել, որի ընթացքում կհաղթի նա ով կկարողանա իրենց բարբառով մի հետաքրքիր պատմություն պատմել, կամ ներկայացնել օրինանք կամ անեծք, որը անում են մեծերը և միայն բարբառով; Հանձնարարվեց տանը նախապատրաստվել ;Աշակերտները հաջորդ դասղեկի ժամին սպասում էին մեծ ոգևորությամբ; Երեխաները այնքան լավ ու անմիջական կատարեցին հանձնարարությունը, որ Լիլիթը ինքն էլ չհասկացավ, թե ինչպես խառնվեց դասարանին և ամենաշատ ինքը խոսեց՝ առանց ամաչելու;

Սովորութային, մշակութային, լեզվական խոչնդոտները վերացնելու և միմյանց սովորույթի տարբերությունը որպես առանձնահատկություն չբնութագրելու նպատակով,որոշեցինք տոնական սեղան պատրաստել, որի ժամանակ աշակերտները պետք է ներկայացնեին իրենց շրջանին բնորոշ ուտեստներ; (Հրազդանի միկրոշրջան թաղամասը խորհրդային տարիներին կարևորագույն արդյունաբերական շրջան էր և այստեղ են հավաքվել Հայաստանի տարբեր շրջաններից եկած, ինչպես նաև հայրենադարձված բազմաթիվ ընտանիքներ);

Մեր ճաշկերույթը վերածվեց ուրախ տոնախմբության,որին մասնակցում էին նաև ծնողներ և ուսուցիչներ; Լիլիթը այնպիսի ոգևորությամբ էր իր մայրիկի

հետ ներկայացնում արցախյան համով ուտեստները, ու առաջնությունը տվեցինք նրանց սեղանին;

Սա մի հարթակ էր, որը նպաստեց, որ

- Լիլիթը ներառվի դասարանում
- Լիլիթի մայրը համագործակցի մեր ծնողների հետ,որը շատ կարևոր է
- օգնեցինք նրանց ժամանակավորապես կտրվել իրենց մտատանջող այլ հարցերից

Հաջորդ քայլը, Լիլիթին ինտեգրելու համար եղավ այն, որ կազմակերպեցինք բաց դաս Հայոց պատմությունից; Դասի թեման հայկական մշակույթն էր; Երաժշտությունը նեկրայացնելիս պետք է ներկայացնեինք ժողովրդական-ազգային երգեը, իսկ Լիլիթը այդ երաժշտության տակ պետք է պարեր: Պարը նրա հոբին էր և կարողացավ բոլորին հիացնել իր գեղեցիկ կատարմամբ; Դասի վերջում մեր ագագրական պարի խմբի ղեկավարը նրան հրավիրեց իրենց խմբում պարելու; Լիլիթի ուրախությունն անսահման էր:

Իմի բերելով իմ և դասարանի աշակերտների կատարած աշխատանքի արդյունքները, վստահորեն կարելի է ասել, որ ևս միմ քայլ կատարեցինք նրան ինտեգրելու գործում, սակայն դեռ շատ անելիքներ ունինք; Նրա վարքագիծը փոխելու և պատերազմական վախերից հանելու համար; Դիմեցի դպրոցական հոգեբանի օգնությանը:

Հոգեբանի աջակցություն

Դեռահասությունը յուրօրինակ տարիքային դրսևորման փուլ է, որը հիմնականում կազմավորում է մարդու անձը, նրա հարմարումը սոցիալական կյանքի նորմերին, պահանջներ է առաջադրում: Ձևավորվում են արժեքային

համակարգի նոր շերտեր: Նա նման է լինում մի նավի, որը նավարկում է բաց ծովում , սակայն չունի ղեկ: Դեռահասը ցանկանում է հասկանալ՝ ի՞նչ անել, ինչպե՞ս անել, ինչպե՞ս ինքնուրույն գործել՝ առանց մեծահասակների օգնության:

Կարելի է առանձնացնել մի քանի հոգեբանական հնարներ դեռահասին օգնելու, նրան խմբում ինտեգրելու համար:

Նախ-անհրաժեշտ է քաջալերել, անկեղծանալ նրա հետ, նրան պատմել ձեզ հետ կապված կարևոր մի իրադարձության մասին, որը վստահում եք միայն նրան:

Երբ նա սկսում է խոսել իր խնդիրների մասին կարելի է օգտագործել որոշ արտահայտություններ,օրինակ ՝ <<Ես քեզ լավ հասկանում եմ>>, <<Տրամաբանական է>>, <<Ինձ հետ էլ է կատարվել նմանատիպ մի բան>> և այլն, որպեսզի ավելի մտերմիկ դառնա զրույցը:

Անհաժեշտ է նրա հետ միշտ լինել անկեղծ: Ցույց տալ նրան, որ դուք էլ, երբ հանդիպում եք դժվարությունների դիմում եք ուրիշի օգնության;

Լիլիթը պատերազմում կորցրել էր միակ եղբորը: Նա տեսնում էր իր ծնողների տառապանքը ամեն վարկյան; Դեռ ավելին՝ նրա եղբոր դին գտնել չէին կարողանում և ավելի էր լարվում տան մթնոլորտը:

Հոգեբանի հետ զրույցից պարզվեց մի անսպասելի փաստ; Նա ատելությանբ էր լցված այն մարդկանց նկատմաբ, ովքեր այստեղ աշխատում և ապրում էին; Մեղադրում էր մեզ՝ Հայաստանում ապրողներիս, որ մենք ենք հրարրել այս պատերազնը , որին զոհ է գնացել իր եղբայրը:

Փողոցից եկած բարձի ձայնը նրան պատերազմն էր հիշեցնում և Լիլիթը գույնը գցում է ու դողում;

Հասկանալի էր, որ մի շարք հարցեր լուրջ բացատրության կարիք ունեն: Հոգեբանը խորհուրդ տվեց Լիլիթին նեկայացնել մեր դպրոցի այն սաների պատմությունը, ովքեր ապրելով Արցախից շատ հեռու զոհվել են հանուն մեր ապահովության; Նպատակը մեկն էր՝ ապացուցել աղջկան, որ ոչ ոք մեղավոր չէ; Որ մեր քաջ տղաները , առանց տարբերություն դնելու, առյուծի նման կռվում

են և, որ իրենց դժբախտության մեջ իրենք մենակ չեն, որ դա համազգային ողբերգություն է;

Նրան բացատրեցինք, որ մեղավորներ ման գալով հարց չենք լուծի, այլ պետք է մի բռունցք դառնանք և ազգովի հաղթանակ տանենք;

Հոգեբանը կարողացավ նրան մեջից հանել վախերը և շուտով նկատեցինք,որ Լիլիթի տրամադրությունը փոխվում է և նա գնալով մտերմանում է ընկերների հետ;

Այս գործում բավական դրական դեր կատարեցին մեր էքսկուրսիաները: Բացատրական աշխատանք էի կատարել դասարանի աշակերտների հետ; Երեխաներին ներկք ունեին;

այացրել էի նրանց ընտանեկան վիճակը, նրա հույզերը, անհանգստությունները; Որոշեցինք ամեն ինչ անել օգնելու համար; Էքսկուրսիաների ժամանակ նրան պահում էին ուշադրության կենտրոնում, աշխատելով չցուցադրել այդ; Միասին պատրաստվեցին մի հյրենաճանաչողական բնույթի արշավի, մանրամասը բացատրելով , թե ինչր ինչպես էր պետք անել;

Հոգեբանի խորհրդով Լիլիթին հրավիրում էինք մեր աշակերտների ծնունդներին, որպեսզի ավելի շատ մարդկանց հետ շփվի և ավելի մտերմանա ընկերների հետ;

Ձեռնարկված քայլերի արդյունքում Լիլիթը սկսեց աստիճանաբր մասնակցել դասերին; Սկզբում տեղից էր խոսում , բայց երբ հասկացավ, որ ոչ ոք չի ծաղրում իրեն, այլ ընդհակառակ՝ օգնում են, համարձակություն ձեռք բերեց և գալիս էր գրատախտակի մոտ: Մի խումբ լավ սովորող աշակերտներ սկսեցին թեմատիկ աշխատանքներից առաջ մնալ դասերից հետո դպրոցում և Լիլիթին նախապատրաստել գրավոր աշխատանքներին:

Լիլիթն աստիճանաբար ներառվում էր դասարանում, որը շատ կարևոր էր :

Լիլիթի ներառմամբ փոխվեց ամեն ինչ՝ դասարանի բարոյահոգեվանական վիճակը բարելավվեց, բարձրացավ թե Լիլիթի և թե դասարանի առաջադիմութունը,

որովհետև Լիլիթին օգնելով հաղթահարել դժվարությունները, դասընկերներն ավելի էին ամրապնդում իրենց գիտելիքները:

Եզրակացություն

Մեր խնդիրը նոր աշակերտին դասարանում ինտեգրելն էր:Այն լուծելու համար առաջ քաշեցինք տարբեր լուծումներ՝

- Պատերազմի պատճառով ստացած հոգեբանական սթրեսից հանելու համար կազմակերպեցինք միջոցառումներնպատակ ունենայով ցույց տալ,հասկացնել նրան,որ պատերազմը միայն իրենց ընտանիքի ողբերգությունը չէ՝այլ ամբողջ հայ ժողովրդինն է:
- Համադասարանցիների հետ զրույցից հասկացա,որ Լիլիթը իրեն դրսևորում է դեռահասին բնորոշ առանձնահատկություններով:
- Ամբողջ դասարանը պատրաստ է աջակցել նրան՝ցանկացած հարցում
- Դպրոցի բոլոր մանկավարժները հոժարակամ օգնելու են նրան՝դասերի ընթացքում և դասերից դուրս:
- Մեր կողմից կատարված տարաբնույթ միջոցառումներն օգնեցին նրան ինքնադրսևորվել,հաղթահարել առաջացած դժվարությունները:Ցույց տալ իր նախասիրություններն ու կարողությունները:

- Դեռահասին օգնելու հանար պետք է կատարել թիմային աշխատանք, որտեղ կընդգկվեն դասղեկը, համադասարանցիները, ուսուցիչները, ընտանիքի անդամները, ծնողները, հոգեբանը, սոցմանկավարժը և շահագրգիռ այլ անձիք:
- Համատեղ աշխատանքը տվեց իր ցանկալի դրական արդյունքը, բայց դեռ կան անելիքներ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1 Ս.Մանուկյան-<<Մանկավարժագիտություն>>, Երևան 2002թ.

2 Վ.Ա.Կրուտեցկի -<<Մանկավարժական հոգեբանության հիմումքներ>> Երևան 1979թ

3 Վ.Ա.Սուպոմլինսկի <<Կոլեկտիվ դաստիարակելու մեթոդիկա>> Երևան 1986թ.

4 Выготский Л.С. Педология подростка//Собр. соч.:В 6 т. М.,1984.Т

5..https://hy.wikipedia.org/wiki

6.https://m.facebook.com/abapsy/photos/905842406123435

7.https://www.shoghakat.am/am/